զոր և քահանայք և միաբան ժողովուրդք մեծաւ խնդութեամբ զգեստաւորելով, խաչիւ և աւետարանաւ շրջեցան զբոլոր քաղաքն և զեկեղեցիք նոցա։ Բայց Ռուզ ազգն չմիաբանեցան, և ոչ կամեցան զայս ուրախութիւնս կատարել, վասն նախանձու սրտից իւրեանց, զոր ի սկզբանէ թշնամիք են թագաւորիս և ամենայն քրիստոնէից ազգին. զոր հատուցէ Տէր ըստ սրտից նոցա։

1579. Թվ. ՌԻԸ, և օգոստոսի ԻԲ. Բազում և անթիւ մարախ եկաւ, վասն ծովացեալ մեղաց իմոց։

1581–2. Թվ. ՌԼ. Շինեցաւ պլանքաներն, Ռոզի խապախն։

1581–2. Թվ. ՌԼ. Տէր Օքսենդն ծեր քահանայ առ Աստուած փոխեցաւ. զոր Աստուած արժանի առնէ ընդ սուրբ քահանայիցն դասս, և էր 90 ամաց. և 58 ամ քահանայութեան արաւ ի Ս. Նիկոլայ եկեղեցի։

1582. Թվ. ՌԼԱ. Մարտի ԺԵ. օրն երկուշաբթի։ Ի Կամենից քաղաքն մեծ ուրախութիւն կատարեցին. այսինքն է որ կոչի Լեկտամռուս (լատին. lætamus, ուրախ լիցուք). վասն զի թագաւորն մեր Ստեփանոս՝ Աստուծոյ կարող զօրութեամբ հնազանդեցոյց զՄոսկովի քնազն. որ և զամենայն աշխարհն Մոսկովի հրկիզ արար և ջնջեաց, և բազում բերդ էառ ի Մոսքովէն։ Յետոյ ոչինչ չկարաց առնել Մոսքովի գնեազն. այլ հրեշտակութիւն առաքելով զմեծ փափան զՀռոմայ, զի հաշտեսցի թագաւորն Ստեփանոս ընդ քնեազին Մոսկովի. և մեծ փափն Հռոմայ՝ փոխանակ իւր առաքեաց զմեծ Կարտնալն իւր՝ մեծաւ փարթամութեամբ, զի եկն և խաղաղացոյց զերկու թագաւորն, որ հաշտեցան ընդ միմեանս, և երդմամբ ուխտիւ հաստատեցին զյաւիտենական խաղաղութիւն յորդեաց որդիս և ազգաց յազգս։ Եւ որչափ այս թագաւորն Ստեփանոս այս հեծելութեան վերայ խազնա և մալ խարճել էր, զայդ ամենայն նմա վճարեց այս Մոսքովի քնեազն. և զիֆլանդն՝ որ է մամլուքազն (վիճակ, գաւառ) Ղեմեցին, զամենայն բովանդակն դարձոյց Ստեփանոս թագաւորին. և էր թուով 130 բերդ. զայդ ամենայն էառ ընդ իշխանութեամբ թագաւորն Ստեփանոս։ Վասն որոյ Քրիստոսի Աստուծոյ մարդասիրին փառք և պատիւ յաւիտեանս. ամէն։

1582–3. Թվ. ՌԼԱ. Եանգով պարոն Օլախաց երկրին՝ հպարտացաւ ընդդէմ թագաւորին Ստեփանոսին, և զծածուկ թղթերն ուժով էառ ի չավուշին ձեռացէն, և երաց և ընթերցաւ. վասն այն պատճառի համար զինքն եհան ի յերկրէն՝ խոնդիքարի հրամանաւն, և նա եկն ի Լով քաղաքն. և թագաւորն Ստեփանոս զնա գլխատել ետ։

1582–3. Հայոց թվ. ՌԼԱ. Նոյեմբեր ամսոյն. Բեթր Օլախի երկրի պարոն՝ զոր հանել էին ի տէրութենէն զինքն, այս վերագոյն գրեալ Եանգուլ պարոնին պատճառաւ, զոր հայցել էր ի խոնդիքարէն, որ փոխանակ Բեդրի նստցի այս Եանգուլս. զոր և խոնտիքարն յաղագս խնդրելոյ նորա կոչեաց